

Գիւլան կը մղէին թուրքիան, որպէսզի ոչ մի-
այն խոչընդոտ ըլլային ոռոսական ծաւալ-
ման, այլ եւ հիմնաքանդ ընէին ոռոսական
պաշտպանութիւնը վայելող հայկական հում
մետաքսի առեւտուրը:

1746-ին ոռուսերը փորձառութեամբ տե-
սան, որ անգլիացիք երկրի շահերուն նպաս-
տաւոր ձեռնարկողներ չեն: Ռուսիան զրկուե-
ցաւ հում մետաքսէ: Ատոր վրայ կայսրուհին
ես առաւ անգլիացոց Ռուսական Ընկերութեան
տրուած բոլոր առանձնաշնորհումները: Ռէշ-
տի ոռուս հիւպատոսը եւ ոռուս առեւտրական-
ները բացէ ի բաց թշնամացան անգլիացոց ու
գանոնք ամէն տեսակ ամբաստանութիւններով
ամբաստանեցին: Հուսկ Հանուէյ հասաւ սա
եզրակացութեան:

«Եթէ արտաքին պատերազմները դուրս
քաշեն ուժերը, կամ առիթ տան, որ այս կողմի
պահակախումբերը մեծապէս նուազին, այն
ատեն ճանապարհները այլեւս ապահով չեն ըլ-
լար: Քանի մը տարի անցած է առանց մասնա-
ւոր պատահարի: Սակայն, մենք պէտք է վախ-
նանք դադտնի եւ յայտնի թշնամիներու վատ
նպատակներէն, որովհետեւ ինչ որ ալ ըլլան
ոռուս կամ բրիտանական ժողովուրդներու ընդ-
հանուր կերպով ստանալիք առաւելութիւննե-
րը, ոչ հայ եւ ոչ ալ ոռուս վաճառականները
երբեք կարելի չէ հաշտեցնել մեզի հետ, երբ
մենք դեռ որեւէ նկատելի շահ կը ստանանք
(կասպեան առեւտուրէն): Մեր գործը, ու-
րեմն, կարելի եղածին չափ լաւ նահանջ մը ը-
նեն է»: 1)

Այս նահանջը սակայն, ոչ լաւ եւ ոչ ալ
կանոնաւոր եղաւ: Անգլիացիները ոչ միայն
լքուեցան պարսիկներէն եւ ոռուսերէն, այլ
նոյնիսկ անոնցմէ հետապնդուեցան թշնամա-
բար, իրենց ստացուածքն իսկ կողպատուեցաւ:
1750-ին Անգլիոյ փարլամէնթը նոր կանոնադր-
ութիւնով դէպի ամերիկեան իր գաղթավայ-
րերը դիմեց հում մետաքսի համար: Նոյն ա-
տեն Պարսկաստանի մէջ շերամբուծութեան
լքումին ազէտալի նշանները սկսան երեւալ:
Այնպէս որ, «հայերը եւ ոռուսերը քանի մը տա-

րիէ ի վեր հազիւ թէ սովորական քանակին
մէկ տասներորդը կը ներմուծէին (Ռուս-
սիա»: 2)

Ռուսիոյ Բրիտանական Ընկերութիւնն ալ
առեւտուրի նուազումէն ստիպուած, ինքն ալ
Փարլամէնթին դիմեց, որպէսզի նոր օրէնքով
մը իրեն թոյլ տրուի նոյնիսկ Ռուսիոյ մէջ
պարսկական մետաքս գնելու, հոն բերուած
ոռուս, մանաւանդ հայ վաճառականներէ: Ի-
րենց տուած յուշագրին մէջ կ'ըսէին.

«Պարսկաստան զրկեցին մօտաւորապէս
երկու հարիւր հազար փառնտի (անգլ. ոսկի)
արժէքով բրիտանական արտադրութիւններ:
Փոխարէն մասամբ պարսկական հում մետաքս
ստացանք: Այժմ արդիւրեւ ենք այս առեւ-
տուրը շարունակելէ բազմաթիւ ապստամբու-
թեանց եւ դժբախտութեանց պատճառով, որ
տեղի ունեցան Պարսկաստանի մէջ այս առեւ-
տուրին սկզբնաւորութենէն ի վեր: Ուրիշ դէպ-
քեր ալ արդիւրեւ են մեր սկզբնական մտադր-
ութիւնը: Նորին Վեհափառութեան (Անգլիոյ
թագաւորը) պարսից արքունեաց մէջ չունի
ներկայացուցիչներ, որ պաշտպանեն գործա-
կատարները, այսինքն՝ Նորին Վեհափառու-
թեան հպատակները եւ մեր ինչքերը այդ երկ-
րին մէջ: Ասիկա ոռուսաց եւ հայոց կուտայ շատ
մեծ առաւելութիւն մեր վրայ՝ Ձեզի ազերսող-
ներուս:

«Եւ որովհետեւ ոռուսերը եւ հայերը մեծ
քանակութեամբ պարսկական հում մետաքս կը
բերեն Ռուսիա, զոր, սակայն, չենք կրնար
մենք՝ Ձեզ ազերսողներս գնել Մեծն Բրիտանիա
առաքելու համար, որովհետեւ ներկայ օրէնքը
կ'արգիլէ պարսկական ապրանքներու բոլոր
ներածումները (Անգլիա), բացի երբ անոնք
ձեռք բերուած են փոխարէն ուղղակի Պարս-
կաստանի մէջ ծախուած մեր ապրանքներուն,
որով ինդոյ առարկայ հում մետաքսը հայե-
րու կողմէ Հոլանտա կը տարուի եւ ատոր փո-
խարէն Միացեալ Նահանգներու բրդեղէն ապ-
րանքները կը ստացուին»: 3)

Փարլամէնթը շնորհեց նոր օրէնքը: Սա-

1) Անդ՝ էջ 337:

2) Անդ՝ էջ 345 (Ծանօթութիւն):

3) Անդ՝ էջ 359: